տեղեկութիւններով նորից զարթեցնում է շահախնդիր ոգին Ասիայի հարուստ երկրների մասին, որով դնում է Վենետկի, Գենուայի և Գերմանական Հանգայի զօրութեան ու հարստութեան հիմը։

(Շ-ր-ա-ն-ի-ն)։ (Թ-ր-ի-մ.) Ս. Բէկ-Նազարեանց։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՐԽԻՒ։

Բ։

ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԸ ԵՒ ՄԱՏԹԷՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ *)։

1857 թուի Փետրվարի 12 ին Ներսէս բոլորովին առողջ էր. գեռ 13 ի առաւօտը չողջունած՝ Թիֆլիզի հայ եկեղեցիները տխուր զանգակահարութեամբ գուժումեն Հայրապետի մահը։ Ներսէս Կաթուղիկոս 13 ի առաւօտեան պահուն կնքում է իւր մահկանացուն։ Կոնսիստորը անմիջապէս իւր անդամոց, ոստիկանական ատիճանաւորի (պրիստաւ) եւ Սինոդի անդամ Սարգիս Արքեպիսկոպոսի ներկայութեամբ հանգուցեալ Հայրապետի իրեղէնները ժողովելով մի սենեկի մէջ կողպում ու կնքում է իւր եւ ներկայ գանուողների կնիքներով. Հանգուցելոյ մարմինը վայելուչ դագաղի մէջ ամփոփելով, դնում է վանքի մայր եկեղեցում եւ պատուիրում է Թիֆլիզի բոլոր հայ քահանաներին բացի վերահաս մեծի պահոց օրերից՝ ամեն օր պատարագել։ Կոնսիստորը այս կարգադրութիւնները անելուց յետոյ հենց նոյն օրը յայտարարութեամբ Հայրապետի մահուան գոյժը հաղորդում է Սինոդին, այս յայտարարութեան մէջ Ներսէսի տարիքը 95 է գրուած։

Սինոդը կաթուղիկոսի մահուան գոյժը ընդունելուց յետոյ՝ Փետրվարի 16 ին գրութեամբ խնդրելով Կովկասեան փոխարքայի հաճութիւնը, Հանգ. Կաթուղիկոսի մարմինը Ս. Էջմիա-

(*) Տեղեկութիւնները քաղուած են Ներսէսի մահուան և Մատթէոսի ընտրութեան համար Սինոդի № 17 գործից՝ որ սկսուած է 1857 թուի Փետրվարի 15 ից և վերջացած է 1864 թուի Սեպտեմբերի 30 ին։

ծին բերել տալու համար, որոշումէ երեք վարդապետների հետ ուղարկել Թիլֆիզ իւր անդամ Մակար Եպիսկոպոսին, պարտաւորեցնելով Սարգիս Արքեպիսկոպոսին՝ կոնսիստորի անդամների քաղաքական ատենաւորի եւ Էջմիածնից ուղարկուածների ներկայութեամբ ցուցակագրել Հանգ. Հայրապետի գոյքը մի առ մի. իրեղէնները ամփոփելով արկղների մէջ՝ եթէ ձրմռան պատճառով դժուարութիւններ չեն լինիլ՝ ուղարկել Ս. Էջմիածին, ապա թէ ոչ, Կոնսիստորի անդամոց ստորագրութեամբ յանձնել նոցա ի պահպանութիւն:

Հանգուցեալ Կաթուղիկոսի մարմնոյ յուղարկաւորութեան համար Սինոդը նոյն օրը կոնսիստորին ուղարկած գրութեան հետ ուղարկումէ հրահանգութիւն, որի տրամադրութեամբ Ա. Մակար Եպիսկոպոսը շաբաթ կամ կիւրակէ օրը բաց պատարագ պէտքէ անէր (մեծի պահոց օրեր էին) եւ Հանգուցեալի կողմից պէտքէ պատշաճաւոր հրաժեշտի քարոզ խօսէր: Բ. դագաղը պէտքէ լինէր ըստ ամենայնի վայելուչ եւ յարմար նընջեցեալի պատուին ու կոչմանը: Գ. պատարագից յետոյ Հոգեհանգստեան ժամանակ առատ տուրք պէտքէ բաժանուէր քահանաներին ու աղքատներին: Դ. դագաղը դուրս հանելուց յետոյ ամպհովանու տակ՝ քահանաները պէտքէ ձեռքի վերայ կրէին մինչեւ քաղաքագուռը եկեղեցական պատշաճաւոր հանդիսակատարութեամբ: Ե. ի պահանջել հարկին, երկու հարիւրի չափ հայազգիք վառած մոմեր ձեռքերնին բռնած պէտքէ հետեւէին դագաղին: Զ. երկու պատուաւոր հոգեւորականներ հայրապետական խաչն ու գաւազանը ձողաբարձ բռնած հետուստ ունենալով իրանց համազգեստներով սեւազգեաց զոյգ՝ շաթիրները՝ պէտքէ յառաջընթաց լինէին դագաղին: Է. Հանգուցելոյ բոլոր շքանշանները թաւշեայ բարձիկների վերայ դրուած, դագաղի առաջից պէտք է տարուէին: Ը. Քաղաքագրան մօտ պէտքէ կատարուէր վերջին Հոգեհանգիստը. դագաղը պէտքէ դրուէր հասարակ փայտից շինուած արկղի մէջ եւ այնպէս ընդ ամպհովանեաւ հաստատուէր յատկացեալ կառքի վերայ:

(Ծան. Սինոդը թոյլ էր տալիս Կոնսիստորին, եթէ յիշեալ հանդերձանքը նուազ լինէին համեմատելով տեղական սովորութեան, անել այն ժամանակ ինչ որ պատշաճ կըդատուէր ոչ ինչ ջանք եւ աշխատանք չըխնայելով:)

Բաց ի սորանից, Սինոդը նոյն Փեբրվարի 16 ին գրումէ Սեւանի վանահօրը, Նոր Բայազէդու հօտի հոգեւոր գործոց վերատեսչին, Երեւան քաղաքի բարեկարգչին, Զիգդամուայ Ստեփան քահանային, որ իւրաքանչիւրը իրանց վարչութեան շրջաններում իրանց ստորադրեալ հոգեւորականների եւ ժողովրդեան հետ ընդառաջելով Հանգ. Հայրապետի դագաղին մատուցանէին վերջին յարգանքը։

Ցուղարկաւորութեան համար այս կարգադրութիւնները անելուց յետոյ, Սինոդը նոյն թուի Մարտի 4 ին զեկուցմամբ իւր աւագ անդամ Ղուկաս Արքեպիսկոպոսին ճանաչումէ տեղակալ Ատենապետի եւ իւր որոշմամբ նոյն ամսի 9 ին գրութիւններով յայտնումէ ի գիտութիւն Հայոց կոնսիստորների, նոր տեղակալի եւ Կոմկասու փոխարքայի։ Մինչ այս մինչ այն՝ նոյն Մարտի 3 ին Հանգուցեալ Հայրապետի դագաղը հասած լինելով Էջմիածին, ամփոփվումէ արեւմտեան դանգակատան հարաւային կողմը։ Այնուհետեւ Մարտի 6 ին կայացած զեկուցմամբ Սինոդը շրջաբերական հրամաններով գուժումէ բոլոր կոնսիստորներին եւ նոցա ձեռքով բոլոր հոգեւոր վարչութեանց կաթուղիկոսի մահը, եւ հրամայումէ կատարել Հանգուցելոյ համար հոգեհանգստեան պաշտօն եւ պատշաճաւոր բանախօսութեամբ հանգուցեալ Հայրապետի մահուան գոյժը հաղորդել ժողովրդեան։ Այս զեկուցմամբ Սինոդը որոշումէ թեմական առաջնորդների պաշտօնակատարներ նշանակել Աստրախանի, Վրաստանի, Ղարաբաղու եւ Շամախու թեմերում, ուր առաջնորդներ չկային։ Կայսերական հրամանով Դաբրիել վարդապետ Այվազեանին Բեսարաբիայի եւ Նոր Նախիջեւանի առաջնորդական տեղակալ նշանակելու համար, տեղւոյն առաջնորդ Մատթէոս Արքեպիսկոպոս Վեհապետեան փոխադրվումէ Աստրախանի Հայոց վիճակը։ Իսկ Սինոդի կողմից Թիֆլիզի թեմի կառավարիչ՝ մնումէ Սարգիս Արքեպիսկոպոսը, Շամախւոյ կառավարիչ նշանակվումէ Մովսէս վարդապետ Մաղաքեանը, եւ Ղարաբաղու կառավարիչ՝ Գէորգ Եպիսկոպոս Վեհապետեանը։

Սինոդը նոյն Մարտի 22 ին որոշումէ, ըստ տրամադրութեան պօլօժենիայի, Հանգուցեալ Կաթուղիկոսի մահուան գոյժը հաղորդել արտասահմանեան հայերի հոգեւոր ներկայացուցիչներին, առաջադրելով որ պատշաճաւոր Հոգեհանգիստ կատարե-

լուց յետոյ պատրաստ լինին տարեւոր ժամանակը լրանալիս՝ Մայիս ամսին կայանալիք նոր Կաթուղիկոսի ընտրութեան համար ժողովներին մասնակցելու:

Սինոդը Ապրիլի 3ին այս որոշումը ածումէ ի կատար գրելով՝ 1. Կ. Պոլսոյ Յակովբ պատրիարքին՝ որ նա ինքն Կ. Պոլսոյ մայր եկեղեցում Հանգուցեալ Կաթուղիկոսի համար հոգեհանգիստ կատարելուց յետոյ՝ պատուիրի որ առաջնորդներն էլ կատարեն վիճակներում. եւ որոշեալ ժամանակին ի կողմանէ հոգեւորականութեան՝ իրան հետ ներկայ լինին Կաթուղիկոսի ընտրութեան կամ անձամբ կամ պատգամաւորների միջոցաւ մասնակցելով ժողովներին: 2. Կ. Պոլսոյ Ազգային Գերագոյն ժողովին Պոլսեցւոց կողմից մի մի աշխարհական ընտրեալ պատգամաւորներ ուղարկելու համար թէ իւր եւ թէ վիճակներից: 3. Երուսաղէմայ Յովհաննէս Պատրիարքին եւ Երուսաղէմայ աթոռի կառավարութեան խորհրդի անդամներին: 4. Ասպահանու Հայոց Թադէոս Արքեպիսկոպոսին հոգեւորականութեան կողմից անձամբ կամ պատգամաւորի միջոցաւ, իսկ աշխարհականների կողմից երկու ընտրեալ (մէկը պարսկահայոց իսկ միւսը Հնդկահայոց) պատգամաւորների հետ մասնակցիլ ժողովին՝ կամ գրաւոր կերպով յայտնել դատողութիւն: 5. Հնդկահայոց՝ աշխարհական պատգամաւոր ընտրելու կամ իրանց կարծիքը յայտնելու համար: 6. Ատրպատականի առաջնորդին:

Թադէոս Արքեպիսկոպոսի առաջադրութեան համեմատ Նոր Զուղայու Հայերը նոյն թուի Սեպտեմբերի 6ին ժողով կազմելով տեղւոյն Ամենափրկիչ վանքում՝ ազգիս եպիսկոպոսներին ընճանալելու համար՝ իրանց ընտրողական ձայնը յանձնումեն տեղւոյն առաջնորդին. այս որոշումը բազմաստորագիր հանրագրութեամբ նոյն ամսի 30ին յայտնումեն Սինոդին: Սինոդը առարկելով թէ արդէն առաջնորդը իւր վիճակի հոգեւորականների կողմից պատգամաւոր լինելով՝ չի կարող պատգամաւոր հանդիսանալ եւ աշխարհականների կողմից՝ — Նոյեմբերի 22ին որոշումէ առաջնորդի միջոցաւ առաջադրել Նոր Զուղայու Հայոց՝ որ կամ տեղւոյն Հայերից մէկին ընտրեն պատգամաւոր՝ կամ իրանց ձայնը յանձնել Ս. Էջմիածնի ժողովին:

Առաջնորդի հրաւէրքին համեմատ՝ Նոր Զուղայու հասարակութիւնը ժողով կազմելով որոշումէ իւր ձայնը յանձնել Էջ-

միածնի մոտիկ բնակուող այն անձին, որին կամենայ տեղւոյն առաջնորդը իբրեւ ծանօթ մարդ Էջմիածնայ շրջակայից նշանաւոր մարդկանց: Թադէոս Եպիսկոպոսը այս որոշման համեմատ պարսկահայոց աշխարհականների կողմից պատգամաւոր առնուանում վաղարշապատի ատենաւոր Գրիգոր Մալինցեանին: Այս մասին 1858 թուի Մարտի 4 ին Թադէոս Արքեպիսկոպոսի յայտարարութիւնը ընդունելով Սինոդը, նոյն ամսի 31 ին որոշում է անընդունելի համարել նորա առաջարկութիւնը, առարկելով թէ, պատգամաւորը պէտք չունի այն տեղացի, որոց կողմից պէտք է պատգամաւորէ, ուստի նորից ընտրութիւն է առաջադրում: Թէեւ Գրիգոր Մալինցեան առաջարկելով Կովկասեան փոխարքային իւր պատգամաւորութեան հաւատարմագրերը խնդրում է տնօրէնութիւն որ կարողանայ մասնակցել ժողովին, բայց չէ յաջողում:

Առպահանու առաջնորդ Թադէոս Արքեպիսկոպոսը չկարողանալով անձամբ կամ պատգամաւորով մասնակցել ժողովին, 1858 Ապրիլի 10 ին յայտարարութեամբ իւր վիճակի հոգեւորականների կողմից կաթուղիկոսական ընտրելի համարում է ա. Սինոդի աւագ անդամ Տեղակալ Ղուկաս Արքեպիսկոպոսին, բ. Երուսաղէմայ պատրիարք Յովհաննէս Արքեպիսկոպոսին, գ. Պօլսոյ պատրիարք Յակոբ Արքեպիսկոպոսին (եթէ թերութիւնը ներէր նորան) եւ դ. Զմիւռնիոյ Պօղոս Արքեպիսկոպոսին:

Առպահանու Թադէոս Արքեպիսկոպոսը նոյն թուին ուրիշ յայտարարութեամբ աշխարհական պատգամաւորի առիթով ուղարկում է այն հանրագրերը կամ պատճէնները, որ Հնդկաստանի հայերը 1857 թուին հաստատել են իրան կաթուղիկոսի ընտրութեան առիթով. այդ հանրագրերով իրանց ձայնը Թադէոս Եպիսկոպոսին յանձնում են ա. Սենկափուրը՝ Հոկտեմբերի 6 ին 1857 թուին, բ. Պենանկ քաղաքը, նոյն թուի Օգոստոսի 12 ին. գ. Բումբայի 29 Օգոստոսի. դ. Բիթաւիա 10 Օգոստոսի եւ ե. Զաւա. իսկ Դաքա քաղաքի հասարակութիւնը Յուլիսի 16 ին, եւ Մադրաս քաղաքի հասարակութիւնը Յուլիսի 14 ին կաթուղիկոսական ընտրելի առաջարկումեն Տեղակալ Ղուկաս Արքեպիսկոպոսի անունը: Հնդկահայերից նոքա՝ որոնք իրանց ձայնը յանձնել էին Թադէոս Արքեպիսկոպոսին՝ նա ընտրելի համարում հոգեւորականների կողմից իւր նշանակած յիշեալ չորս

Արքեպիսկոպոսների անունները, իսկ ինքն իւր կողմից պատգամաւոր նշանակումէ Թիֆլիզի պատգամաւորին տալով հաւատարմագիր 1858 թուի Ապրիլի 10ին, որ թէեւ անագան քան ժողովը հանումէ Էջմիածին, սակայն առաջարկվումէ ի գիտութիւն փոխարքային Կովկասեան կողմանց:

Ասպահանու Թադէոս Արքեպիսկոպոսը, տեսնելով որ Ջուղայու աշխարհական պատգամաւորի առլիթով Սինոդը զանազան տարակուսութիւններ է մէջ բերում, եւ նշանակուած պատգամաւորին չի ընդունում՝՝ նոյն 1858 թ. Ապրիլի 28ին գրումէ Սինոդին հետեւեալը. —

«Երկաւորը յառաջ ընկալեալ զծանուցագիր Սիւնհոդոսիդ ըզգրեալն ի 4ն Մարտի 505 համար, տեղեկացաք իմաստից այնր՝ որպէս թէ անկանոն է դէպուտատութիւն ազնուական Աղայ Գրիգոր Մալինցովի ի կողմանէ Ջուղայաբնակ Հայոց՝ յառաջ բերելով զերեքտասան յօդուածն Բարձրագոյն կարգադրութեան. այն թէ իւրաքանչիւր վիճակի պարտի լինիլ երկու դէպուտատ, մի՝ ի հոգեւորականաց կուսէ և միւս՝ յաշխարհականաց. և յաւելու Սինոդ թէ «նշանակելի դէպուտատն պարտի լինել բնակիչ նոյն իսկ թեմի, յորմէ կարդի նա և ոչ այլոյ ուրուք օտար վիճակի»:

«Այսպիսի պարզ հրաման չէք յերեքտասան յօդուածն Բարձրագոյն կարգադրութեան. ուստի հրամանագրելն Սիւնհոդոսիդ թէ «պարտի լինել բնակիչ նոյն իսկ թեմի» է մեկնաբանութիւն. զի երեքտասան յօդուածն բարձրագոյն կանոնադրութեան դայս ծանուցանէ «իւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ ընտրութիւն պատրիարքի նշանակէ զերկուս պատգամաւորս . . . . իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց՝ ի հարիւրապետաց՝ ի մելիքաց և այլոց աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ»: Ընտրեալ և կարգեալն դէպուտատ ի կողմանէ Ջուղայաբնակ Հայոց համաձայն բարձրագոյն կարգադրութեան է ի պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ:

Ջուղայաբնակ ժողովրդականք արարին զկարգադրութիւն այնպիսի սակս այսոցիկ պատճառաց, նախ՝ զի ոչ էր կարելի նոցա ընտրել զոք դէպուտատ ի միջոյ ինքեանց և առաքել ի Սուրբ Աթոռդ սակս անկարողութեան իւրեանց. երկրորդ՝ ոչ ընտրեցին դէպուտատ զի նա համաձայն չորեքտասան յօդուած բարձրագոյն կարգադրութեան զորոշումն իւր գրով յայտնիցէր, զի ընտրեալ դէպուտատն էր անծանօթ ազգային սրբազան Եպիսկոպոսացն, վասն որոյ ոչ կարէր առնել զորոշումն իւր. երրորդ ի ժամանակս ընտրութեան Վեհափառ Ներսիսի հանգուցեալ Հայրապետին՝ ըստ արդի առաջին տնօրէնութեան իւրեանց թողեալ էին ի կամս ընտրութեան Սրբազան Յովհաննէս եպիսկոպոսի Դրիմեցւոյ

առաջնորդի իւրեանց զընտրութիւն կաթուղիկոսի*)։ և սակս այնր ոչ էին ընկալեալ զբացասական ինչ պատճառաբերութիւն ի Սինոդէն։ չորորդ՝ զի անղանաղան համարեցին նոքա զՋուղայեցի և զՀայաստանցի Հայս յառարկայի ազգային դէպուտատութեան։ քանզի, որպէս Հայրապետութիւն է ծայրագոյն հոգևոր իշխանութիւն սակս ամենայն Հայոց, նոյնպէս և ամենայն Հայք թէ Հայաստանցի իցեն և թէ Ջուղայեցի բարեմիտ հոգւով ջանան զի ընտրեալն վասն Հայրապետութեան եղիցի ի վկայեալ արժանաւորաց ազգային եպիսկոպոսաց։ վասն որոյ յաղագս ընտրելոյ զոք դէպուտատ ի պատուաւոր աշխարհականաց Հայաստանի՝ վասն իւրեանց անծանօթ լինելոյ նոցա և մեր ծանօթ լինելոյն՝ խնդրեցին զոք յարժանաւորաց ընտրել և կարգել դէպուտատ ի կողմանէ ինքեանց։ Այդոքիկ պատճառօք յուսամք թէ ներելի իցէ Ջուղայեցւոց առնել զտնօրէնութիւն այնպիսի։ Ով որ և ընտրեսցի կաթուղիկոս՝ ընտրեալնմեծարելի և ընդունելի է մեզ և ժողովրդեանն մերում։»

Սինոդը այս յայտարարութիւնը ստանալով Մայիսի 30 ին մակագրումէ ըստ այսմ. «Որովհետեւ ժողով ընտրութեան նորոյ պատրիարքի արդէն վերջացեալ է։ վասն որոյ զայս յայտարարութիւն առանց օրագրութեան կցել ընդ գործոյն»։

(Ստորագրութիւն անդամոյ)

Կ. Պոլսոյ պատրիարքարանը ի կողմանէ բոլոր Տաճկահայոց՝ Հոգեւոր եւ Դերագոյն ժողովների կնիքներով վաւերացած Ապրիլի 2 ին գրութեամբ իբրեւ ընտրելի առաջարկումէ ա. Կ. Պոլսոյ պատրիարք Յակոբ Արքեպիսկոպոսի՝ բ. Երբեմն պատրիարք Մատթէոս Արքեպիսկոպոսի՝ գ. Պրուսայու Գէորգ եպիսկոպոսի՝ դ. Կարնոյ Գրիգորիս եպիսկոպոսի եւ ե. Զմիւռնիոյ

(*) 1843 թուին Ասպահանու Յովհաննէս Արքեպիսկոպոսը Օգոստոսի 9 ին իւր Արքեպիսկոպոսարանումը Ջուղայու ազգայիններից ժողով կազմելով, Հոգեւորականների կողմից ընտրումէ Յովհաննէս աւագ քահանայ Խաչիկեանին, իսկ աշխարհականների կողմից՝ Տէր Ղուկասեանին, նոցա յանձնարարելով ընտրել Բեսարաբիայի Արքեպիսկոպոս Ներսէսին։ Այս պատգամաւորները անձամբ չկարողանալով գալ Էջմիածին, գրաւոր յայտնումեն իրանց կարծիքը ըստ իրանց վիճակայնոց տրամադրութեան։ Հետեւումէ որ, 1843 թ. պատգամաւորները եղած են իրանց վիճակայիններից։ սակայն ի նկատի ունենալով որ Պոլսոյ պատրիարքարանի կամ Տաճկահայոց պատգամաւոր ներկայանումեն Թիֆլիզեցիներ, որոնք մասնակցումեն ժողովներին՝ ընտրելի համարելով պատրիարքարանի առաջարկած անունները։ հետեւումէ որ պարսկահայք էլ կարող էին իրանց կողմից պատգամաւոր ընտրել վաղարշապատցի Գրիգոր Մալինցեանին։ Մի խնդիր միայն անորոշ է մնում. եթէ պարսկահայք անուանէին մի ընտրելի եւ իրանց ձայնը յանձնէին Մալինցեանին՝ ժողովի մէջ այդ ընտրելիին ձայն տալու, արդեօք Սինոդը այդ ժամանակ էլ կընբացասէր։

Պօղոս եպիսկոպոսի անունները: Ժողովներին մասնակցելու համար ընտրվում է Թիֆլիզի Գեներալ լէյտենանտ իշխան Բարսեղ Յովսէփեան Բէբութեանցը, որի հաւատարմագիրը՝ Ապրիլի 1 ին Հոգեւոր եւ Դերագոյն Ժողովների կնիքներով կնքուած եւ Պօլսոյ Ռուսաց դեսպանատան կնքով վաւերացած էր, բայց յիշեալ իշխանի մահուան պատճառով պատրիարքարանի նոյն Ապրիլի 12 ին գրած թղթի զօրութեամբ պատգամաւորումեն Թիֆլիզցի պօլկովնիկ իշխան Իսահակ Սիմոնեան Թումանեանցը եւ պօդպօլկովնիկ Աբէլ Գէորգեան Գուրգէնբէկեանցը:

Հարկ եմ համարում գնել այստեղ հետեւեալ գրութիւններն եւս, առաջինն յանուն Տեղակալի եւ Սինոդականաց. երկրորդն յանուն պօլկովնիկ իշխան Իսահակ Սիմոնիչ Թումանովի եւ պօդպօլկովնիկ Աբէլ Եագորիչ Գուրգէնբէկովի եւ երրորդ՝ հաւատարմագիրը յանուն իշխան Վասիլ Օսիպովիչ Բէբութովի:

(Ա. գրութիւն).

«Գերապատիւ և շնորհաշուք բարձր Տեղակալ Արարատեան Մայր Աթոռոյ սուրբ Էջմիածնի և ամենայն Սինոդական մեծարեալ Հաբք.

«Որովհետև յուղղափառ հաւատս քրիստոնէութեան ծնեալ, և հոգեբուղխ վարդապետութեամբ սրբազան հարց մերոց սնեալ, յարգեմք զամենայն կանոնս նոցա ամենայն մասամբ զգուշաւորութեան և ճգնիմք արեամբ չափ չբերել առ նոսա արատ ինչ, յայն սակս իբրև հաւատարիմ աւանդապահք՝ զառ ի սրբազան հայրապետաց և ի նախնեաց մերոց զոր ինչ ունիմք և զոր տեսեալ և լուեալ եմք ըստ հոգևորին, անփոփոխ և անայլայլելի պահեալ եմք և փութամք ի նոյնութեան պահել յաւիտեան.

«Ապաքէն՝ ծանուցաւ մեզ լրութեան Աղգիս Տիրահրաւէր փոխումն յաստեացս Գերերջանիկ և Սրբազնասուրբ Հայրապետին մերոյ և ծայրագոյն Քահանայապետին, որպէս և գրեցիք մեզ երկիցս ցաւոք սրտի. և ըստ կանոնի խնդրեալ էք զհաճութիւն բազմագումար ընակչացս Տաճկաստանի ի նորոգ ընտրութիւն արժանաւորի ուրուք, որ յաջորդեսցէ ի տեղի նորա. Ուստի և մեք աստանօր ի մայրաքաղաքիս Հոգևոր և Գերագոյն ժողովականքս՝ ի խնդրանաց և ի պատշաճ տեսութենէ բովանդակ Աղգին յԱրքունուստ հաստատեալ սեպհական արտօնութեամբք մերովք հաւաքեալք ի մի, որպէս արդարև ներկայացուցիչ ազգայնոց հոգևորականաց և ժողովրդականաց եղելոց ի սահմանի Օսմանեան պետութեան, և համահաճութեամբ գրեցաք զայ՝ գիր յայտնելով զխորհուրդս մեր.

«Եւ արդ յառաջ քան զամենայն խնդիր է մեր ուխտիւք յԵրկնաւոր Քահանայապետէն մերմէ զի ցուցէ մեզ զարժանաւոր փեսայ անարատ հարսին իւրում սրբոյ եկեղեցւոյ ի գահակալութիւն այդմ Մայր Աթո-

ոդ ըստ հոգևոր մասին, որ իցէ յուղղափառ հաւատս անխոտոր վկայեալ, ի սուրբ պաշտամանն և ի կոչմանն ամենայն ջերմեռանդութեամբ եռանդուն, ջատագով հայրենի աւանդից և ուղղութեան կարգաց և կանոնաց, երկիւղած և զգուշապահ ծիսից և արարողութեանց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ. մինչև ցայս վայր ի վարս երկնակրօն սրբութեան անբամբաս քաղաքավարեալ, Հօտին Քրիստոսի օրինակ բարի զանձն ընծայեալ, և միով բանիւ ասել. իսկաբանչ տիպ և նմանութիւն ունիցի Հիմնադրի Արարատեան Մայր Աթոռոյն մերոյ՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և արժանաժառանգ յաջորդաց նորա, որք յեկեղեցական իրաւասութեանց և ի կաթուղիկոսական անկախ արտօնութեանց և ոչ նշանախեցիւ չափ ինչ մի կորուսեալ են և կամ այլայլեալ ոչ յառաջ և ոչ յետոյ. և զզրկեալ զք այժմ ի բարեմասնութեանց աստի և յանկախութենէ հոգևոր իշխանութեան իւրոյ ոչ ընկալցուք երբէք, և ոչ հաւան լիցուք հնազանդիլ ի հոգևորս յայն վիճակ խոնարհեալ հոգեւորական իշխանաւորի.

«Եւ ահա երկիւղած մտածութեամբ որոշեցաք յԱրժանապատիւ եպիսկոպոսաց Աղգիս զՀնդեսին զայսոսիկ, զԱմենապատիւ պատրիարք մայրաքաղաքիս զՏէր Յակովբ սրբազան Արքեպիսկոպոսն, զնախկին պատրիարք Տ. Մատթէոս Արքեպիսկոպոսն, զԳէորգ եպիսկոպոս Պրուսայու, զԳրիգորիս եպիսկոպոս Կարնոյ և զՊօղոս եպիսկոպոս Զմիւռնիոյ. Եւ վասն հնգեցունցս այսոցիկ մի օրինակ և համաձօր ունելով հաճութիւն, ի քուէարկութեան անդ՝ զոր ունիցիք առնել յընտրութեան անդ, հաճութիւն մեր լի բովանդակ համարեսցի այնմ վասն որոյ և իցէ ի հնգեցունց աստի յաջողեալ ընտրութիւնն. և զնորին սրբազնութիւն ծանիցուք անվրէպ Ամենապատիւ և Արժանընտիր յաջորդ բազմերախտ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և Գլուխ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, և ծայրագոյն ընդհանուր պատրիարք և քահանայապետ բոլոր լրութեան Աղգիս Հայոց.

«Ապաքէն ըստ ձերոյ գրութեանց ի 14 Սեպտեմբերի անցելոյ ամի առ Սրբազան Պատրիարք մեր և Տէր. «բարեհաճել այժմէն իսկ ազդել ի միտս անդամոց աղգային գերագոյն ժողովոց հոգևորականաց և քաղաքականաց Հայոց Կ. Պոլսոյ». եղէք իբրև արդար և գիտակք սահմանադրութեան կառավարութեանց հոգևորականաց և ժողովրդականաց Հայոց տաճկաստանի յանձնեցելոյ յակնարկելոյ բովանդակ Աղգին յարքունուստ երկուց ժողովոցս ի գործադրութեան մերոց իրաւանց յընտրութիւն նորոյ Հայրապետի, ի կողմանէ լրութեան հոգևորականաց և ժողովրդականաց Կոստանդնուպօլսոյ, նոյնպէս և ի կողմանէ հոգևորականաց և ժողովրդականաց քառասուն և հնգիւ չափ Առաջնորդութեանց եղելոց ընդ պատրիարքութեամբ Կ. Պոլսոյ, յԱսիայ և յԵլլադայ, զվախճանական դիտումն մեր ի պայծառութիւն և ի շինութիւն սրբոյ Հայաստանեայց եկեղեցւոյ յայտնապէս գրեալ, ի հաստատութիւն զիս-

կական կնիք ժողովոցս դրոշմեցաք։ Ի պատրիարքարան ամենայն Հայոց, ի Կոստանդնուպոլիս։ 1858։ Ապրիլ 2։ »

Ի դիմաց հոգեւորականաց Մայրաքաղաքիս եւ քառասուն եւ հինգ աւագնորդութեանց եղելոց, յՕսմանեան պետութեան ժողովոց հոգեւոր կնքեմք։

Տեղի կնքոյ։

Ի դիմաց ժողովրդականաց Մայրաքաղաքիս եւ քառասուն եւ հինգ աւագնորդութեանց եղելոց յՕսմանեան պետութեան ժողովոց Ազգային կնքեմք։

Տեղի կնքոյ։

(Բ. գրութիւն).

«ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ
ՀԱՅՈՑ
Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

«Ձերդ Պայծառափայլութիւն Բարձրապատիւ Իշխան Կնէազ Իսախ Սիմոնիչ Թումանով և Բարձր Ազնուութիւն Ապէլ Եակօբիչ Գուրգենպէկով։

«Նկատմամբ ընտրութեան Նորոյ Հայրապետի սուրբ Աթոռոյն Էջմիածնի, որ ըստ որոշման Սինոդի Նոյնոյ Աթոռոյ երևի ունել զգործադրութիւնն յառաջակայ Մայիսի ամսոջ, զկամս և զխորհուրդս բովանդակ Ազգի Հայոց եղելոց ի Տաճկաստանի, ի գիր առեալ ազգային Հոգեւորական և Քաղաքական Դերագոյն ժողովոց Կոստանդնուպօլսի, առաքեցաւ յատուկ խնամօք Կայսերական Դեսպանին Ռուսաց որ ի Մայրաքաղաքիս, առ Նորին Պայծառափայլութիւն Կնէազ Վասիլ Օսէվիչ Պէպութով՝ առանձին նամակաւ խնդրելով ի նմանէ հասուցանել զնոյն ժողովական գրութիւն մեր ի սուրբ Էջմիածին, և լինել փոխանորդաբար գործադիր ամենայն գրեցելոց նախայիշեալ երկաքանչիւր Ազգային ժողովոց մերոց։ սակայն յետ ոչ բազում՝ աւուրց ընկալեալ տարաբաղդութեամբ զգոյժ մահուան Նորին Պայծառափայլութեան Կնէազ Պէպութովի, որ ընկղմեաց զմեզ ի խորս ցաւոց, և առնելոյ ժամանակին փոխել զպաշտօնական գրութիւնն ազգային ժողովոց մերոց յանուն Նորին Պայծառափայլութեանն հանգուցելոյ, ճեպեցաք գրել զգիրս առ Ձեր Բարձր Պայծառափայլութիւն ի կողմանէ Ազգիս յանձնելով Ձեզ զայն ամենայն գործադրութիւնս առաջարկեալս ի նմին գրութեան անդ առ Նորին Պայծառափայլութիւն Կնէազ Պէպութով։ խնդրելով զի հաճեսջիք անպակաս կատարել զնոսին ազգասիրաբար։ Ողջ լինել մաղթեմ։

Ի 12 Ապրիլի։ 1858։

Ձերդ Պայծառափայլութեան
մշանջենաւոր աղօթարար (ստորագրութիւն) Պ. Կ. Յակոբ
Արքեպիսկոպոս։

Տեղի կնքոյ։

(Գ. գրութիւն).

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ
ՀԱՅՈՑ
Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

«Նորին Պայծառափայլութիւն

Փոխանորդ փոխարքային Կովկասու Տէր Եռնալ Լէյթինանդ և ասպետ Կաւալեռ Քնէազ Վասիլ Օսէվիչ Պէպութով.

«Խնդիր. Օսմանեան Տէրութեան Հպատակ եղեալ Ազգիս Հայոց Գերագոյն ժողովին Կոստանդնուպօլսոյ, որ է հաստատեալ կայսերական հրամանաւ.

«Ականաւորք և անուանիք ազգիս հաւաքեալ ի գերագոյն ժողովս միաբան ընտրեցաք հինգ եպիսկոպոսունս որք են. 1. Այժմեան Կ. Պոլսոյ Պատրիարք Յակովբ Սրբազան Արքեպիսկոպոսն. 2. Նախկին Կ. Պոլսոյ Պատրիարք Մատթէոս Արքեպիսկոպոսն. 3. Պրուսայի վիճակաւոր Գէորգ Արքեպիսկոպոսն. 4. Զմիւռնիոյ վիճակաւոր Պօղոս Արքեպիսկոպոսն. 5. Կարնոյ վիճակաւոր Գրիգորիս Արքեպիսկոպոսն.

«Զի ահա ըստ հրամանի Սինօդին սուրբ Էջմիածնի Ամենայն, գրեցաք զպատասխանին և սոյն խնդրագրով առաքեմք առ Ձերդ Պայծառափայլութիւն. զի ազգասիրական ոգւով ողորմեսջիք ընդունել զաղաչանս բոլոր Հայ հպատակացս Օսմանեան տէրութեան, և փոխանակ ամենեցունցս յանձնեմք Ձերդ կամացն, զի ի ժամանակի ընտրութեան Կաթուղիկոսի, կամ հրամանագրով Ձերդ ազգապետութեան և կամ զոք ի դիմաց Ձերոց առաքելով ի սուրբ Ամենայն յայտնել զկամս Ձերդ Պայծառափայլութեան. մինն ի սոյն հնգիցն ո՛ զք և իցէ հաճելի քանզի ընտրեալն ի ձէնջ ընդունելի է մեզ ամենեցունցս. վասն զի չունիմք առաքել զոք ի կողմանէ մերմէ, ոչ հոգևորական և ոչ մարմնաւորական. ամենայն կերպիւ յանձնեալ եմք առ Ձերդ Պայծառափայլութիւն.

Ողջ լեր ի պարծանս և ի պայծառութիւն ազգիս.
Անամբ Ձերդ Պայծառափայլութեան

ի 1 ն Ապրելի 1858 Խ. Ծ.

Ի Կ--ոստանդն--ուպ--ոլ--. Անդամք ազգային գերագոյն ժողովոյ

Անդամք հոգևորական կնիք

ժողովոյս Կոստանդնուպօլսոյ կնքեմք.

կնիք

Ռուսահայոց Թեմական աշխարհական պատգամաւորների ընտրութեան մի օրինակը կայ գործում, — եւ է երեւանինը: Ինչպէս երեւում է Երեւանայ Թեմական Յաջորդ Առեփան վարդապետի Սինոդին ուղղած Մայիսի 12-ին գրած յայտարարութիւնից՝ լինելիք կաթուղիկոսի ընտրութեան համար խորհր

ծելու, եւ Թեմի կողմից մի աշխարհական պատգամաւոր ընտրելու եւ 1858 թուի Մայիսի 11-ին Երեւանում կայանելիք Թեմական ժողովին մասնակցելու համար՝ գաւառներից եւ եկեղեցիներից ընտրուել են հետեւեալ անձինքը.

1), Նորք գիւղից Մահտեսի Մարկոս Ցարուբիւնեան.
2), Նոր Բայազիտու գաւառից Բայազէտցի Վարդան Մամիկոնեան.
3), Երեւանայ Կոնդի ժողովրդից Ղահրաման Մելիք Ադամալեանց.
4), Զանգիբասարի, Գառնիբասարի և Շարուրի գաւառներից Մելիք Դաւիթ Մելիք Ղազարեան.
5), Ալէքսանդրապօլու վիճակի կողմից ազնուական Խաչատուր Ասլանեանց,
6), Սուրմալուայ և Սարդարապատու գաւառներից Ահարոն Մելիք Վրթանէսեան,
7), Երեւանայ Զօրավար եկեղեցու կողմից Աստիճանաւոր Արսէն Սուլթան Գեղամեան,
8), Երեւանայ Ս. Պօղոս և Պետրոս եկեղեցու կողմից աստիճանաւոր և ասպետ Մարտիրոս Սարգսեան Բունիաթեանց, որի մահուան պատճառով ընտրուեց աստիճանաւոր Գրիգոր Թարխանեան,
9), Արարատու, Կարբուոյ և Թալնոյ գործակալութեանց կողմից Մելիք Պօղոսէ Առաքելեան և Մելիք Գէորգ Խաչատրեան,
10), Սիւնեաց վիճակը իւր ձայնը յանձնումէ պատգամաւորի ընտրութեան ժողովին,
11), Երեւանայ Ս. Կաթուղիկէ եկեղեցու ժողովրդեան կողմից աստիճանաւոր Յակոբ Մակաչեան,
12), Հին Նախիջեւանու վիճակից աստիճանաւոր Աւետիս Տէր Մկրտչեանց
13), Երեւանայ Ս. Սարգիս եկեղեցոյ ժողովրդի կողմից աստիճանաւոր Արսէն Բարաջանեան,

Յիշեալ ներկայացուցիչներից չը կարողանալով մասնակցել Թեմական ժողովին՝ իրանց ձայնը յանձնումեն—

Ա. Արարատու Թալնոյ և Կարբուոյ ներկայացուցիչները՝ Գեղամեանցին

Բ. Նախիջեւանայ վիճակի ներկայացուցիչը՝ Ղահրաման Մելիք Ադամալեանին,

Գ. Բայազէտի ներկայացուցիչը՝ Մելքոն մահտեսի Աբրահամեանին,

Դ. Ալէքսանդրապօլու վիճակի ներկայացուցիչը՝ Ղահրաման Մելիք Ադամալեանցին կամ աստիճանաւոր Արսէն Սուլթան Գեղամեանցին կամ Ագուլեցի Տէր Մկրտչեանցին,

Թեմական ժողովում Ս. Էջմիածնի ընդհանուր ժողովին մասնակցելու համար ընտրվումէ Երեւանայ Թեմի կողմից պատգամաւոր աստիճանաւոր Ղահրաման Մելիք Ադամալեանը:

Ահա Թեմական ժողովի արձանագրութիւնը.—

«Ի 11 աւուր Մայիսի 1858 ամի, Հաւատարմացեալքս ի ժողովրդականաց եկեղեցեաց Հայոց Երևան քաղաքի՝ Պօրուչիկ Արսէն Սուլթան Գեղամեանց, Տիտուլեարնի սովետնիկ Ղահրաման Մելիք Աղամալեանց, Պրապօրսչիկ Արսէն Պապաջանեանց, Տիտուլեարնի սովետնիկ Գրիգոր Թարխանեանց, Տիտուլեարնի սովետնիկ Յակով Մակաշեան, Մահտեսի Մարկոս Յարութիւնեան, և գաւառացն՝ Նոր Բայազիտայ Մելքոն մահտեսի Աբրահամեան, Սուրմալուայ և Սարդարապատու Ահարոն Աղայ Մելիք Վարդանեանց, Զանգիբասարայ, Գառնիբասարայ, և Շարուրայ՝ Պրապօրսչիկ Մելիք Դաւիթ Մելիք Ղազարեան՝ ըստ հրաւիրագրոյ բարձր Արժանապատիւ Յաջորդին Թեմական Արբեպիսկոպոսի վիճակիս ժողով կազմեալ յԱռաջնորդարանի քաղաքիս առ ի նշանակել համախոհ խորհրդով ղէպուտատ ի դիմաց հայազգի ժողովրդեան համայն Թեմին Երևանայ՝ յաղագս անձամբ խորհրդակից և մասնակից գտանելոյ ի համազգային մեծի ժողովին, որ կայանալոց է յայսմ Մայիս ամսեան ի սուրբ Էջմիածին յաղագս ընտրութեան նորոգ ծայրագոյն պատրիարք կաթուղիկոսի ամենայն Հայոց, նախընթացաբար հաստատեալ գրաւոր դատողութեանց հաւատարմացելոցն Յաջորդութեանց Ալէքսանդրապոլու՝ Ազնուական Խաչատրոյ Ասլանեանց, Նախիջևանու Ղուբերնսկի սեկրետար Աւետսի տէր Մկրտչեանց և Տաթևու պատուաւոր ժողովրդեանն, յետ պարտ ու պատշաճ խորհրդածութեանց՝ համայնօժար ընտրողութեամբ նշանակեցաք ի միջոյ մերմէ ի պաշտօն դէպուտատութեան վասն վերոգրեալ համազգային վսեմ իրողութեան՝ զտիտուլեարնի սովետնիկ Ղահրաման Մելիք Աղամալեանց, որոյ նշանակումն չէ անհամապատասխան և գրաւոր դատողութեանցն Հաւատարմացելոց ժողովրդեան վերոյ անուանեալ Յաջորդութեանց.

Այլ թէ խորհուրդ մտաց մերոց յաղագս կաթուղիկոսականն գահակալութեան յորոյ վերայ է՝ յանձնեցաք առանձինն նմա—յիշատակեալ դէպուտատին և հաւատարմացուցաք զնա լիակատար իրաւամբք՝ տալ զձայն ըստ այնմ յԱտենի ընտրողական ժողովոյն սրբոյ Էջմիածնի. Իսկ ի հաւաստութիւն արձանագրելոց ի վերոյ ստորագրեմք զայս ընտրողական թերթ, և մատուցանեմք բարձր Արժանապատիւ Յաջորդին առ ի առաջի առնել Լուսաւորչեան Հայոց Սինոդին Էջմիածնի

(Ստորագրութիւն)

«Պօրուչիկ Արսէն Սուլթան Գեղամեանց,
Պրապօրսչիկ Արսէն Պապաջանեանց,
Տիտուլեարնի սովետնիկ Գրիգոր Թարխանեանց,
Տիտուլեարնի սովետնիկ Յակոբ Մակաշով Մուշեղեանց
Պրապօրչիկ Մելիք Դաւիթ Մելիք Ղազարեանց,
Մահտեսի Մարկոս Յարութիւնեանց
Ի պատճառս անդրագիտութեան Մելիք Ղազարեանի

և Յարութիւնեանի, ըստ խնդրանաց Նոցա սուրբագրիցի ի տեղի Նոցա Պօղոս քահանայ Տէր Աւետիսեանց Ահարօն Աղայ Մելիք Վրթանէսեանց»։

Ժողովի համար ընտրուած պատգամաւորները հասած լինելով Ս. Էջմիածին, Հիւրընկալ Շահնազարեան Դանիէլ վարդապետը Մայիսի 16-ին Սինոդին ներկայացնում է եկած պատգամաւորների անուանական ցուցակը ըստ այսմ.

Հերթական թիւ	ՑՈՒՑԱԿ Անուանց պատգամաւորաց եկելոց ի զանազան կողմանց յԷջմիածին յընտրութիւն Նորոգ Կաթուղիկոսի	Օր գալըստեան. Ամիս	օր
1	Պատգամաւոր ի Հոգևոր կողմանէ վիճակին Շամախւոյ կառավարիչ Նոյն Թեմին Մովսէս վարդապետ. . . .	Մարտի	22
2	Պաշտօնակատար վիճակաւոր առաջնորդի Ատրպատականի Յակոբ վարդապետն Շահպազեանց	Մայիսի	2
3	Անդամ Սինոդի և պաշտօնակատար վիճակաւորին Վրաստանի Արքեպիսկոպոսն Սարգիս.	»	7
4	Պատգամաւոր ի հոգևոր կողմանէ Թեմին Վրաստանու Գրիգոր վարդապետն Սադինեան.	»	7
5	Պատգամաւոր ի հոգևոր կողմանէ վիճակին Ատրպատականայ Տէր Գրիգոր քահանայ Սուրբիասեանց	»	8
6	Պատգամաւոր ի հոգևոր կողմանէ Թեմին Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանայ Յովհաննէս վրդպտ Ռէկնապարեանց.	»	9
7	Աշխարհական պատգամաւոր Նոյն Թեմին Տիտուլեարնի սովետնիկ Յարութիւն Մինասեան Աւագեանց . . .	»	9
8	Աշխարհական պատգամաւորն Թեմին Վրաստանու Ատարբեկի սովետնիկ Սօլոմոն Արտեմիչ Ամիրով բժշկապետն	»	10
9	Պատգամաւոր ի հոգևոր կողմանէ վիճակին Ղարաբաղու պաշտօնակատար վիճակաւորի Թեմին Ղարաբաղու Գէորգ եպիսկոպոսն Վեհապետեան.	»	13
10	Պատգամաւոր ի հոգևորական և աշխարհական կողմանէ համարէն Հայոց Տաճկաստանի և Կոստանդնուպօլսոյ Կնեազ պօլկովնիկ Իսակ Թումանեանց և Պոդպօլկովնիկ Արէլ Գուրգէնբէկեանց.	»	14
11	Պատգամաւոր ի հոգևոր կողմանէ Երևանայ վիճակի Ստեփաննոս վարդապետ Գէորգեանց.	»	15
12	Աշխարհական պատգամաւոր Թեմին Ղարաբաղու Գուբերնսկի սեկրետար Ումրի բէկն Յօհաննեանց	»	16

Ա. Բացակայ էին Ժողովից Պարսկաստանի եւ Հնդկաստանի աշխարհական պատգամաւորները արգէն յայտնի պատճառով.

Բ. Համախուռ աշխարհական պատգամաւոր Յովհաննէս բէկ Պօպովեանց ինչ ինչ պատճառներով չը կարողանալով ներկայ լինել Ս. Էջմիածնի ընդհանուր ժողովին՝ Ապրիլի 23-ին գրութեամբ

յանուն Սինոդի ընտրելի առաջարկումէ Ղուկաս Արքեպիսկոպոսի անունը:

Գ. Աստրախանի աշխարհական պատգամաւոր Ալէքսանդր Դաւթեան Շամքարեանը տկարութեան պատճառով չը կարողանալով ներկայ լինել, իւր ձայնը յայտարարութեամբ Ապրելի 30-ին յանձնումէ Ս. Էջմիածնի ժողովին:

Դ. Երուսաղէմայ Յովհաննէս պատրիարքը Մարտի 1-ին գրութեամբ իւր ձայնը յանձնումէ Ս. Էջմիածնի ժողովին:

Կովկասու փոխարքան ուղարկելով Էջմիածին Դէյիտավիտեանի ատատասկի սովետնիկ Ավթանդիլեանցին որպէս ներկայացուցիչ կառավարութեան, Մայիսի 5-ին գրութեամբ առաջադրումէ Սինոդին սկսել կաթուղիկոսի ընտրութեան համար ժողովները համեմատ 1843 թուի հաստատուած հրահանգութեան (Տես Ա. բարատ Օգոստոս ամիս): Այսպէս էլ վարվումէ Սինոդը:

ժողովներին մասնակցող պատգամաւորներն էին.

Ա. Սինոդի անդամներ.

1, Ղուկաս Արքեպիսկոպոս Տեղակալ ատենապետի Սինոդի.
2, Մակար եպիսկոպոս.
3, Սարգիս Արքեպիսկոպոս.
4, Եղիազար վարդապետ Տէր Կարապետեան.
5, Գրիգոր վարդապետ Յովսեան.
6, Գէորգ վարդապետ Տէր Մկրտչեան.
7, Սարգիս վարդապետ Տէր Դաւսպարեան.

Բ. Ս. Էջմիածնի պատգամաւորներ, նշանակուած Սինոդի Մայիսի 14-ին զեկուցմամբ.

8, Պօղոս եպիսկոպոս Մալխասեան.
9, Յարութիւն եպիսկոպոս Կարնեցի.
10, Յովհաննէս վարդապետ Շահնազարեան.
11, Մկրտիչ վարդապետ Յովակիմեան.
12, Մկրտիչ վարդապետ Բաբամեան.
13, Յովհաննէս վարդապետ Տէր Յարութիւնեան.
14, Դանիէլ վարդապետ Շահնազարեան.

Գ. Վիճակաց հոգեւոր եւ աշխարհական պատգամաւորներ.

15, Գէորգ եպիսկոպոս Վեհապետեան և } Ղարաբաղու.
16, Գուրեղնեկի սեկրետար Ումբիրէկ Յովհաննեանց. }
17, Յովհաննէս վարդապետ Բէկնազարեան և } Բեսարաբիոյ և
18, Տիտուլեարնի սովետնիկ Յարութիւն Մինասեան } Նոր Նախիջևանայ.
Աւագեանց. }

19. Գրիգոր վարդապետ Ծագինեան և
20. Ստատսկի սովետնիկ Սոլոմոն Արտեմիչ Ամիրով } Վրաստանու
21. Ստեփան վարդապետ Գէորգեան և
22. Տիտուլեարնի սովետնիկ Դաւրաման Մելիք Ա-
ղամալեան. } Երևանու
23. Պոլկովնիկ իշխան Իսակ Թումանեան և
24. Պոդպոլկովնիկ Արէլ Գուրգէնբէկեան. } Տաճկաստանի
25. Գրիգոր քահանայ Սուքիասեան. Աստրախանու
26. Յակովբ վարդապետ Շահպազեան. Աստրպատականի.
27. Մովսէս վարդապետ Մաղաքեանց. Համախուղ.

Ժամանակի նշանաւոր Արքեպիսկոպոսներն էին.

Ռուսաստանում	Արտաքսմանում (Տաճկաստանում)
1. Ղուկաս Արքեպիսկոպոս	1. Յակովբ Արքեպիսկոպոս Պատրիարք Կ. Պոլսոյ
2. Մատթէոս Արքեպիսկոպոս	2. Նախկին պատրիարք Կ. Պոլսոյ Մատթէոս Արքեպիսկոպոս
3. Գէորգ եպիսկոպոս	3. Գէորգ եպիսկոպոս Պրուսայու
4. Մակար եպիսկոպոս	4. Գրիգորիս եպիսկոպոս Կարնոյ
5. Սարգիս Արքեպիսկոպոս	5. Պօղոս եպիսկոպոս Զմիւռնիոյ
	(Պարսկաստանում)
	6. Թադէոս եպիսկոպոս.

Այս նշանաւոր Արքեպիսկոպոսներից Տեղակալ Ղուկասը կամովին ընտրելեաց կարգից հրաժարուելոյց յետոյ հետեւեալ չորս Արքեպիսկոպոսները համարվում են ընտրելի, որոնց վերայ կատարվումէ ընտրութիւնը եւ սոքա են—

1. Յակովբ Արքեպիսկոպոս պատրիարք Կ. Պոլսոյ
2. Նախկին պատրիարք Մատթէոս Արքեպիսկոպոս
3. Գէորգ եպիսկոպոս Պրուսայու
4. Պօղոս եպիսկոպոս Զմիւռնիոյ.

Սորանից Մատթէոս Արքեպիսկոպոսը Մայիսի 20-ին ստանալով 115 ձայն եւ Պրուսայու Գէորգ եպիսկոպոսը 23 ձայն՝ համարվումեն աւագագոյն կանդիտատ. եւ ստորագրութեամբ ժողովականաց կազմվումէ հետեւեալ օրագրութիւնը.

«1858 ամի ի 18-ն Մայիսի ժողովն բարձր սրբազան Արքեպիսկոպոսաց, սրբազան եպիսկոպոսաց, բարձրապատիւ վարդապետաց և ականաւոր աշխարհական պատգամաւորաց ի վիճակաց Ռուսաստանի և քառասուն և հինգ վիճակաց Հայոց Տաճկաստանի, գումարելոց ի տաճարն սրբոյ Էջմիածնի վասն ընտրութեան ծայրագոյն պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց ի վերայ հիման օրագրական սահմանադրութեան Սինոդի սրբոյ Էջմիածնի ի 22 ն Մարտի 1857 ամի կայացելոց և առաջադրութեան Տեա-

որն Փոխարքային Կովկասու ի 5 ն սոյն Մայիսի համարաւ 1484 բացեալ ի սոյն թիւ զատենակալութիւն իւր ձեռնամուխ եղև ի գործ ընտրութեան Կաթուղիկոսի, սահմանելով զգործողութիւն իւր յայսմ աւուր միայն երդմնածութեամբ աշխարհական պատգամաւորաց յանաչառ ընտրութիւն տեղակալաց (կանդիտատաց) յաստիճան պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց ի ներկայութեան Պ. Դէյիստվիտելնի Ստատսկի սովետնիկ Աւթանդիլեանցի, նշանակեցելոյ ի Նորին Պայծառափայլութենէ իբրու անձն հաւատարմացեալ առ այս գործ ի կողմանէ տէրութեան։ Յերկրորդում աւուր այսինքն ի 19 ն սոյն ամսոյ բոլոր ներկայ եղեալ հոգևորականք և աշխարհական անդամք ժողովոյն ի ներկայութեան Նորին իսկ գերազանցութեան, ընթերցեալ զառաջարկեալ ցուցակն երևելի Արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց գտանելոց ի սահմանս ԿԱՑՍԵՐՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՑ և յարտասահման տէրութեան Տաճկաստանի և Հնդկաստանի. այն ինչ ձեռնամուխ եղև յընտրութիւն սահմանեալ թուոց կանդիտատաց ի պաշտօն Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի, յոր թիւ անուանեցաւ և Արքեպիսկոպոսն Ղուկաս ընկալելով ընդ նմին ի նկատումն զգրաւոր դատողութիւնս ոմանց ի հոգևորականաց և աշխարհական պատգամաւորաց ի կողմանէ զանազան Թեմից՝ Բարձր Սրբազնութիւն Նորին համառօտ և ազգու բանախօսութեամբ յատենի ժողովոյն յայտնեալ զգաղափար բարենպատակ դիտաւորութեան իւրոյ՝ զմիաբանութիւն համազգեաց մերոց ի Տաճկաստան ի հանրաշահ օգուտ ազգին և ի պայծառութիւն եկեղեցւոյն Հայոց վերանորոգութեամբ նախկին յարակցութեան նոցին առ Գերագահ մայր Աթոռն սրբոյ Էջմիածնի, որ կարճեալ գտանի ի վաղուց հետէ ըստ ինչ ինչ հանգամանաց, ըստ որում նախ ենթագրութեան իսկ ի դիմաց Ատենակալաց Սինոդին արարեալ է հրաւիրական առաջարկութիւն առ Գերագոյն ազգային ժողով տեղւոյն հրաժարեալ յայնմանէ եդիտ յիւրմէ կողմանէ օգտաւէտ յայս նուագ զայնս չորս կանդիտատս ընտրել բոլորովին յԱրքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց Տաճկաստանի, զորս Գերագոյն ազգային ժողով աշխարհականաց և հոգևորականաց Հայոց Տաճկաստանի գտեալ վկայեալ է արժանաւոր աստիճանի Կաթուղիկոսութեան։ Յետ որոյ ժողովն ընտրութեան զայս ենթադրութիւն Նորին բարձր Սրբազնութեան ճանաչեալ ըստ ամենայնի արդարակորով ազգօգուտ և բարենպատակ յոժարակամ համաձայնութեամբ ընտրեաց ի կոչումն կանդիտատութեան պատրիարք Կաթուղիկոսի, զչորս անձինս ի Տաճկահպատակ եպիսկոպոսաց, որք են՝ զայժմեան պատրիարքն Կոստանդնուպօլսոյ զՅակովբոս Արքեպիսկոպոսն, զնախկին պատրիարքն տեղւոյն զՄատթէոս Արքեպիսկոպոսն, զվիճակաւոր առաջնորդն Պրուսայու զԳէորգ եպիսկոպոսն և Զմիւռնիայու Պօղոս եպիսկոպոսն, որոց վասն և կազմեցաւ առանձին ընտրողական թերթ ընդ ստորագրութեամբ անդամոց ժողովոյն համաձայն սահմանեալ կարգին։

Ցերբորգում աւուր այսինքն ի 20 ին Մայիսի համաձայն ընտրութեան ժողովոյն ի վերոգրեալ չորից կանդիտատացն արժանի եղեն կոչման աւագագոյն կանդիտատաց՝ երկուքն ի նոցանէ Բարձր Սրբազան Մատթէոս Արքեպիսկոպոսն և վիճակաւորն Պրուսայու Սրբազան Գէորգ եպիսկոպոսն ըստ առաւելութեան ձայնից՝ տուելոց յօգուտ նոցա, վասն որոյ յիշեալ ժողովն հոգևորականաց և աշխարհականաց ՍԱՀՄԱՆԵԱՑ, ըստ զօրութեան 18 յօդուածոյ ԲԱՐՁՐԱԳՈՑՆ հաստատեալ կարգադրութեան յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ, նշանակել վասն առաքելոյ առ Նորին Պայծառափայլութիւն Տ. Փոխարքայն Կովկասու, զերիս պատգամաւորս յանդամոց իւրոց, յոր պաշտօն և կարգել ի հոգևորականաց զպատգամաւորն թեմին Ղարաբաղու զԳէորգ եպիսկոպոսն և յաշխարհականաց զդէպուտատն Տփխիսու զկոլեժսկի սովետնիկ բժիշկ Ամիրեանցն, Նոր Նախիջևանու և Բեսարաբիոյ Տիտուլիարնի սովետնիկ Ցարութիւնն Աւագեանց, զորս և առաքել ընդ առաջարկութեան ի դիմաց անդամոց Սինոդին հանդերձ պատշաճաւորն ընտրողական թերթիւք և սոյն իսկ սահմանադրութեամբ ժողովոյն առ Նորին Պայծառափայլութիւն, յետ թողլոյ զպատճէնս նոցին ի գործս Սինոդին վասն պատշաճաւորն ի կողմանէ Նորին տնօրէնութեան համաձայն կանոնաց, ի հաստատութիւն պատրիարք Կաթուղիկոսի ըստ սահմանեալ կարգին

(Ստորագրութիւնք ժողովականաց)

(Ստորագրութիւն Պրոկուրորի)

Առենադպիր (ստորագրութիւն)

Կովկասի փոխարքայի Հոկտեմբերի 25 գրած թղթից խմանալով որ կայսրը բարեհաճել է Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Մատթէոսին ճանաչել Կաթուղիկոս, Սինոդը Հոկտեմբերի 31 ին կայացած օրագրութեամբ որոշումէ.—

Ա. Նորընտիր Կաթուղիկոսին ընդառաջելու համար ուղարկել Կ. Պոլիս Սինոդի անդամ Մակար եպիսկոպոսին, Մկրտիչ վարդապետ Բարամեանին եւ Տփխիսայ Կոնսիստորի անդամ Գալուստ վարդապետ Փափազեանին: Բ. Նորընտիր Կաթուղիկոսի անունը յիշել եկեղեցում եւ կատարել գոհացողական մաղթանք թագաւոր Կայսեր եւ Կայսերական տան բարօրութեան համար: Գ. Հրաւիրակների ճանապարհածախսուց համար տալ մի հազար բուբլի եւ ժապաւինեալ մատեան՝ ծախքը գրելու համար: Դ. յայտնել Կովկասու Փոխարքային հրաւիրակների անունները եւ նոցա՝ Էջմիածնից դուրս գալու օրը: Ե. Սինոդի եւ բոլոր միաբանութեան կողմից շնորհաւորել Նորընտիր Կաթուղիկոսին

եւ յայտնել նորան թագաւոր Կայսեր բարեհաճութիւնը. այս մասին յայտնել նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքին եւ ազգային գերագոյն ժողովին գոհացողական մադիանք կատարել Ռուսաց թագաւոր Կայսեր եւ Օսմանեան Սուլթանի համար:

Իսկ յատկացեալ հրովարտակը ստորագրած 1859 Մարտի 7 ին յանձնումէ կառավարիչ սենատին, որ հաղորդումէ Կովկասու Փոխարքային Ապրիլի 3 ին: Կովկասու Փոխարքայն գրութեամբ Մայիսի 6 ին 1859 ամի կառավարիչ սենատի հրամանի պատճէնը ուղարկումէ Սինոդին:

Նորընտիր Մատթէոս Կաթուղիկոսը 1859 թուի Ապրիլ ամսի վերջերին դուրս գալով Կ. Պոլսից ուղեկցութեամբ Կ. Պոլսոյ Հոգեւոր ժողովի անդամ Սարգիս եպիսկոպոսի եւ Ս. Էջմիածնի հրաւիրակների՝ ուղեւորումէ դէպի Ս. Էջմիածին:

Նորընտիր Կաթուղիկոսը Յուլիսի 7 ին Էջմիածին հասնելուց յետոյ, ըստ նոյն ամսոյ 10 ին կազմած Սինոդի զեկուցման՝ ի ներկայութեան Սինոդի անդամոց եւ Պրոկուրորի երդվումէ ըստ այսմ:—

«Ես ի ներքոյ անուանեալս խոստանամ և երդնում յամենակարողն Աստուած առաջի սրբոյ Աւետարանի նորա, թէ ես կամիմ և պարտիմ ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ իմն իսկական յատուկ Ամենազորմած մեծի ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԿԱՑՍԵՐ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵՒԻՉԻ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ ԵՒ ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՆԳԻ Ամենայն Ռուսաց ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻ ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ ծառայել հաւատարմութեամբ և անկեղծօրէն և յամենայնի հնազանդիլ. ոչ խնայելով զանձն իմ մինչ ցյետին կաթիլ արեան իմոյ և զամենայն պատկանեալ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ, զօրութեան և իշխանութեան ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ իրաւունս և արտօնութիւնս, թէ օրինադրեալս և թէ յետոյ օրինադրելիս՝ ըստ չափու զօրութեան և իմանալոյ իմոյ և ըստ վսեմութեան նոցա պահել և պաշտպանել և ամենայն զօրութեամբ գուն գործել յամենայն ժամանակի նպաստամատոյց լինել յայն գործս, որք վերաբերին հաւատարիմ ծառայութեան և ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ շահու ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ. Իսկ երբ իրազգած եղէց զվնասուց օգտին ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, զպակասութենէ և զկորստենէ շահու՝ զայն ամենայն ոչ միայն աճապարել ի յայտ ածել. այլ նաև ամենայն հնարիւք ջանալ խափանել զայնոսիկ և ինձ զհաւատացեալ խորհուրդն պահպանել պնդութեամբ. նա և զեղեալն ի վերայ իմ և հաւատացեալն ինձ աստիճան ի գործ դնել պարտ ու պատշաճ եղանակաւ ըստ խղճի մտաց

իմոց, համաձայն որպէս այսմ ընդհանուր, նմանապէս և առանձին սահմանագրութեան և համեմատ ժամանակէ առ ժամանակ յանուն ՆՈՐԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆ ՄԵԾԱՒՈՐԵԱՆ յիմ վերայ կարգադրեալ մեծաւորաց տուեալ պատուիրանացն՝ հրամարակաց և հրամանացն։ Իսկ վասն շահասիրութեան, մերձաւորութեան, բարեկամութեան կամ թշնամութեան չընթանալ ընդդէմ պարտաւորութեան իմոյ և երդմանս, և այնորինակ վարիլ, որպէս վայելուչն է հաւատարիմ հպատակի ՆՈՐԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆ մեծաւորեանն. և որպէս զի կարացից ես տալ պատասխանի յայնմ առաջի Աստուծոյ և ահաւոր աթոռի նորա, որ և ինքն տէր Աստուած օգնեսցէ ինձ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Ի վախճան այս իմ երդման, համբուրեմ զբանս և զխաչ փրկչին իմոյ։ Ամէն։ ի 18ին Յուլիսի 1859 ամի։

Ըստ այսմ երդմնագրոյ երդուայ (յիսկականին)

Մատթէոս Կաթուղիկոս ամենայն Հայոց։

Երդմնեցոյց՝ Պօղոս եպիսկոպոս

Անդամք Սինոդի։

(Ստորագրութիւնք)

(Ստորագրութիւն Պրոկուրորի)

Նորընտիր Կաթուղիկոսը Օգոստոսի 15ին ընդունում է Ս. Օծումն եւ սկսում է վարել իւր հայրապետական իշխանութիւնը։

Յուսիկ Վարդապետ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՆՈՐԱ-ԿՈՉՄԱՆԸ ՀԱՄԵՄԱՏ։

(Դասախօսութիւն Ռուսոյի Վ. Խրխովի, որ կարդացուած է Բերլինի գրթութեան քոյրերի վանքի լսարանումը)։

Յարգելի պատիւ ունկնդիրներ,

Դասախօսութիւնները, որոնք այս ճառովս բաց են անում ընտանեկան ու ժողովրդական կրթութեան ժողովը կամ ակումբը, նպատակ ունին պատրաստել հասարակութեան համար բարեկամներ ու միջոցներ։—բարեկամներ, որպէս զի կրթութեան գործը, որից կախուած է ժողովրդի ապագան, ստանար այնպիսի մի զօրաւոր ոյժ խնդրի կերպարանք՝ որի համար անխոնջ աշխատէին ճշմարիտ գիտունները։ միջոցներ՝ որպէս զի մեր լայնածաւալ քաղաքումը, ինչտեղ կարիքները ու պի-